Կաֆայի հայ գաղթականութեան ծնունդ, պարծանք ու պաշտպան նոր վկայ մ' է Պարոն-Լոյս պատանեակն, որ դատաւորաց առջև հասակէն վեր արիութեամբ դաւանելով զճշմարտութիւն քրիստոսական հաւատոյ, կարմրերփեան մաքուր արեամբ դրաւ կեանքն, և սուրբ գերեզմանն հռչակաւոր ուխտատեղի եղաւ, և է ցայսօր, յեկեղեցւոջ սրբոցն Յովակիմայ և Աննայի, հաւատացեալ ժողովրդոց։ Կաֆայի գաղթականութեան և իրենց եռանդուն բարեպաշտութեամբ կանգնած եկեղեցեաց վրայ խօսած ատեննիս, հարկ է համառօտ նուէր մ'ալ ընծայել իր անմոռաց և փառաւոր յիշատակին, քաղելով իր սրբական վարուց համառօտութիւնն ի Նոր Նախիջեւան պահուած Յայսմաւուրք գրքէ մը, զոր նոյն ականատես վկայն Վրթանէս վարդապետ շարագրած է։

Աստուածատուր անուն բարեպաշտ և ընտիր հօր զաւակն էր Պարոն-Լոյս պատանի նահատակն, սուլդան Սէլիմի թագաւորութեան ժամանակ, և ըստ գեղեցիկ բացատրութեան վկայագրին « ի ձմեռնացեալ ժամանակի վարդ անուշահոտ երևեալ ի մէջ աշխարհի, և վառեցաւ որպէս հուր ի սէրն Քրիստոսի »։

Հայոց ՌԺԶ թուականն էր, և Քրիստոսի սուրբ աստուածայայտնութեան հրաշալուցի օրը։ Եւ ահա յանկարծ մոլեգնեալ խուժան մը դիմեց այս ուխտատանամեայ պատանեկին վրայ, « որ էր մանուկ տիոք, և տեսլեամբն գեղեցիկ, հասակաւ վայելուչ և լեզուաւ ճարտար. աստուածային ընորհօքն զարդարեալ »։ կ'ամբաստանէին թէ ի քրիստոսական հաւատոց հրաժարած ըլլայ երբեմն ի Կէօղլէվ և այլազգութիւնն ընդունած. և կը բռնադատէին կը